

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

թի 24

12 ՅՈՒՆԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկրորդական կրթութիւն պէ՛տք է մեզի. Մ. ՆԱԹԱՆԵԱՆ.—Օրուան կեանքէն. «Բանաստեղծութեանց շուրջը». ՄԵՆԱՍԷՐ.—Գրական Դեմքեր. «Վաճառ Մալեղեան». Մ. Ա. ՊԱՐՄԱՆ.—Հիւանդանոցին մէջ (Նորավայ) ԱՏՕԼՖ ՌԻՊՕ.—Լոյսն պաշտում (Բանաստեղծութիւն) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ.—Խմբագրական Նօթեր.—Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրեցն է Կ. Պոլսոյ համար հառաւել զրօ. եւ գաւառներուն համար յիսուն զրօ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերթ ստացած են, պէ՛տք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Զեռ-Քէ Կը ԵԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ծրանս. կառավարութեան ֆոնդորին ներքեւ, երաշխաւորեալ դրամադրութիւն ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոյժքած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ծրանսայի նահանգներու եւ գաւառներու կալդ մը պաշտօնատուներէն զատ, Բարիդի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալէէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտիւնիէօի, Օթէլ ար Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Փրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէօլիք Երլաղ խոն, թիւ 14, Լա Գօնֆրանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր աւանդական սեփականութիւնը հղող անքիւֆի վաճառատուն մը, Շուկայ Սահաֆլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅ ԱՊԱՀՈՎՂՈՒՐԱԿԱՆ ԸՆԴ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻԶ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ք Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փաստք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագիրն	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Ք Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փաստք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագիրն	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրթիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bēnéfices) ՅՈՒՌԻ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի ՏԵՐԵՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Խալէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զբոսեանքի արաքսման

Պալապեան ամէն օր տկուայի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Յրեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալապեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու չինած տկու-
անքը: Յորեկները տկուայ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կամքէն կ'ախտուէ:

Ապփաստեալն ճիշտ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ դա-
ւազաններ եւայլն, գիմե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար
100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած
գոհարեղէնները եթէ փաստուած չեն՝ 100ին
10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապագիկ գե-
նեղներէն՝ 100ին 15 զեղչով:

ԲՈՂՈՐ ԵՐԱՆՍԵՔ ԵՎ ԿԵՆՏԵՆ

Ասիական որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կունենայ, սակայն անոնցմէ շատերը՝ սաստիկ ցաւօք և անհանգստութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուիլ մանուկներուն,



Հիշերու վրայ ստոր ուշա-
դրութիւն ընել պէտք է:

24

SCOTT'S EMULSION

որնոր ակոյայ հանած ատենին՝ բոլոր ցաւերէ և աղետներէ զանոնք կը փրկէ:

ԸՍԳՕԹԷ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է. անոնց կատարեալ առողջութիւն կուտայ և զանոնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թոշ Զեր զաւակները առողջ և զօրաւոր մեծան շնորհիւ:

ԸՍԳՕԹԷ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՈՒՆ:

Բաւար Կեղտոյթները և Կեղտոյթները կը ծախեն:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան

(Գրասենեակ՝ Մահմուտ - փաշա, Թարագծը-
լար, Մեծ Նոր Խանի կից: Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին տղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաք-
սէ, եւ թէ՛ բուրդէ ամէն տեսակ ընտիր գոր-
գեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց
ո՛ր եւ է որոտ կամ հետք ձգելու: Ընդ-
հակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը
կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած
գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գոր-
գերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին
մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցե-
ցերու (կիւվէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնաս-
ուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ
պտարասեւ նոր գորգեր, ինչ մեծութեամբ
ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղարկն
գրասենեակը:

Դիւրամտակի պատմներ:

ՏՈՔԹ. ԳԻՐԻԱՔՈՒ

Dr. Kiriakou Bander mali

Ջիդերու, լեադի եւ usամոսի հիւանդու-
թեանց մասնագէտ

Բարիդի հիւանդանոցներուն մէջ գործնա-
կան փորձեր կատարելով վերագրեալ հիւան-
դութեանց համար մասնագիտութիւն ձեռք
բերած է: Իրեն դիմողները կը դարձան ամէն
օր ժամ 7էն 10 Բերա Աղա Համամ հիւլենա.
կան հիւպատոսարանին դէմ, թիւ 5 տունը,
իսկ առաւելները միջեւ կէսօր Պոլիս կամար-
ջին գլուխը Բոսթաքի Արտէնաքի թիւ 71
դեղարանը: Քիչ տանի մէջ կը դարձան
լղային տկարութիւններ, լուսնասութիւն,
անդամալուծութիւն, գլխու ցաւ, օրտի բա-
բախում, անքունութիւն, փորագիտան
ախտ, յօդացաւ, ստամոքսի հիւանդութիւն-
ներ, դժուարաւարութիւն, արգանդի հի-
ւանդութիւն եւ այլն: Դարձանման համար
ներարկումով ելեկտրականութիւն կը գոր-
ծածէ: Ելեկտրական դարձնի համար մաս-
նաւոր սրահ մը կայ:

ՄԱՍԻՈՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 24

12 ՅՈՒՆԻՍ 1904

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏՔ Է ՄԵԶԻ

Կարգ մը շրջանակներու մէջ խնդիր եղած է թէ մերինին պէս համայնքի մը համար պէտք է երկրորդական կրթութիւնը թէ հարկ է բաւականանալ միայն նախնական կամ տարրական նախակրթութեամբ:

Այսպիսի խնդիր մը գոյութեան իրաւունք անգամ ունենալու չէր: Բայց զարմանալին ան է որ ոչ միայն ծնունդ առեր է, այլ և կարծիք ու գաղափար յայտնողներ եղած են թէ աւելորդ է տարրական նախակրթութենէ դուրս ուսմունք տալ հայ աշակերտներու: Կամ գոնէ, ըսեր են ուրիշներ, խիստ սահմանափակելու է երկրորդական կրթութիւնն առնողներու թիւը:

Մենք կը կարծենք թէ ոչ մէկ ազգի կամ ժողովրդի մէջ այսպիսի խնդիր մը կրնայ ըլլալ, և ընդհակառակը գիտենք թէ ամէն տեղ մեծ քանք կայ ո՛չ միայն երկրորդական, այլ և բարձրագոյն կրթութեամբ օժտելու ուսանող մանկութիւնը, պատանութիւնը և նոյն իսկ երիտասարդութիւնը: Ատոր համար, եթէ իրենց միջավայրին մէջ չգտնուի պէտք եղած հաստատութիւնը, իրենց ընդունակ ուսանողները կը զրկեն հեռաւոր երկիրները, ծախքերնին հոգայով կամ հանրային մտուկէ պաշտօնապէս և կամ կրթասէր բարերարներու նուիրած մասնաւոր գումարներէ:

Մեր մէջ դժբաղդաբար ոչ առաջին տեսակէն մտուկ կայ, ոչ երկրորդ տեսակէն, բաց ի Ասպետ Զունդի կտակէն, որ շատ սահմանափակ բան մըն է, և որ այս տարի առաջին անգամ պիտի գործածուի յօգուտ թրքահայ ուսանողութեան, ասկէ առաջ անգամ մը միայն գործածուած ըլլալով ի նպաստ աւստրահպատակ հայ ուսանողներու, ընդ ամէնը երեք հոգի:

Բայց պաշտօնապէս կամ անհատապէս հաստատուած նպաստամատոյց մտուկներու գոյութիւնն չունենալը պէտք չէր որ մեզի այն եղբակացութեան տանէր թէ սկզբունքը կամ պէտքն իսկ աւելորդ է, այսինքն թէ երկրորդական կրթութիւնը մեզի համար անհարկի պերճանք մըն է, զոր կարելի է դանց ընել անտոյժ և անշնաս:

Հարկ չենք համարիր ըսել թէ երկրորդական կրթութիւնը աւելորդ դատողները՝ բարձրագոյն կրթութեան անունը անգամ չեն տար բնականաբար, նկատելով զայն ալ աւելի զանց առնելի ճոխութիւն մը:

Բայց հազիւ հարկ կը համարինք յիշեցնել թէ որ և է համայնք որ այսպէս երկրորդական ու բարձրագոյն կրթութիւնը կը վտարէ իր մէջէն, կը դատապարտուի ըլլալու հասարակութիւն մը, որ լոկ մշակներ, ծառաներ, գրագիրներ, պարզ արհեստաւորներ, սրճեւիներ, կոշկակարներ և այլն կը պարունակէ, մարդկային ընկերութեան մէջ միջակ ու միջակէն ալ աւելի վար դիրք մը միայն գրաւելով:

Եթէ մեր համայնքին դիրքը այսպիսի մակարդակի մը իջեցնել է միտքը անոնց՝ որ երկրորդական կրթութեան պէտքը աւելորդ կը տեսնեն մեզի համար, ըսելիք չմնար: Իսկ թէ ատկէ տարբեր ի՞նչ տեսակէտ կրնայ ըլլալ, դէթ պարզ մահկանացուներու խելքին անհասանելի կը մնայ: Եւ կը խոստովանինք թէ մենք այդ դասակարգին կը վերաբերինք: Եթէ երբեք գտնուէին մեր մէջ երկրորդական կրթութիւն տարածող բաղմաթիւ հաստատութիւններ, որոնք տարուէ տարի հարիւրաւոր ընթացաւարտներ դուրս տային, եւ

կամ եթէ բարձրագոյն կրթութիւն ստացողներու թիւը չափէն աւելի չառ ըլլար ու երթալով հետզհետէ աճէր, թերեւս մեղմացուցիչ պարագաներ ստեղծելով — որոնք գոյութեան արդարացուցիչ պատճառ չունին թէպէտ—ներեւի ըլլաւ ըսել թէ քիչ մը սահմանաւորելու է անոնց թիւը: Բայց քանի որ յայտնի է թէ ոչ մէկը և ոչ միւսը բաւական է, թո՛ղ թէ չափազանց, բոլորովին անըմբռնելի կը մնայ հետեւաբար խնդրոյ նիւթ եղող գաղափարին ծնունդը և մանաւանդ զանիկա գործադրութեան դնելու ջանք և հետամտութիւնը:

Ընդհակառակը, եթէ կայ ընելիք բան մը՝ այդպիսի կրթական խնդիրները իրենց մէջ ձեռնելու ձեռնհաս չըջանալներուն համար, երկրորդական և բարձրագոյն կրթութիւն առնել ուղղողները քաջալերել և անո՛ց առջև դիւրութեան միջոցներ հայթայթելն է:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԵՍՔԵՐ

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

Ա.

Մեր մէջ մինակ ինքն է որ, իր փղոսկրէ վաճ դակին մէջ ինքնամփոփուած, չխառնուիր բնաւ մեր գրական խնդիրներուն, բանակոխներուն, ընկերային ու իմաստասիրական ալ, եթէ կուզէք, հարցերու շուրջը դարձուած անակնկալ քչքչուքներուն:

Ինք անոնցմէ չէ որոնք բնութիւնը երգել կը սիրեն, անոր համար որ անիկա չա՛տ հըմայիչ է ու շատ աղուոր. բնութեան մէջ, ան իր տառապողի, սիրողի վերացումները, սաւառնումները կը փնտռէ, ու ամէն սուրկայ գրեթէ իր մէջ հոգեկան ցաւազին յիշատակ մը կ'արթնցնէ, վասն զի անոնց բոլորին մէջ ալ իր երգած պարիկին շունչը զգալ կը կարծէ մեղամաղձոտութեամբ մը որ բնական ըլլալուն համար անտանելի, արհամարհելի չէ սակայն:

Վստահ էր անշուշտ թէ օր մը մեր գրականութեան ամէնէն նուրբ՝ թէև հիւանդաբոյր, ամէնէն անգայտ, թափանցանց՝ թէև մշուշոտ, ամէնէն փափուկ, քնքուշ՝ թէև հեշտալարակ քերթուածներն ու նորավէպերը պիտի գրէր, երբ կ'ըսէր 1900ին, իր առաջին հրատարակութեան պատմութիւնը ըրած ատեն Մասիսին մէջ՝ «—Անոր համար արդէն գրավածառներուն քովէն հաւաքած եմ Մամուկը ու Անթիպը գրքոյկներս. որոնց կծու քննադատը կը դառնամ այսօր, աւելի քան ներողամիտ ընթերցողները»:

Իր նորավէպերը իբրև բանաստեղծութիւն շատ բան կ'արժեն, բայց իբրև nouvelle իրենց հրապոյրէն բաւական կը կորսնցնեն, ինչ որ կը փնտռես, ինչ որ կը սպասես՝ անոնց չես հանդիպիր բնաւ հոն. հիւանդ հոգիներու, ջլախտաւոր կիներու, տխուր գեղեցկութիւններու, սիրտի խաղերու շուրջը կը դառնան բոլոր իր նորավէպերը, որոնք սակայն հրաշալի ոճով մը արտայայտուած, մաքուր, հիւանդոտ, վճիտ բառերու հիւսուածքով մը, Մալէճեանը կը յատկանշեն բացարձակապէս: Կը կարծես որ նորավէպերուն մէջ ներկայացուած տիպարը ինքն է, ինքդինքը ուսումնասիրած է անոնց մէջ, իր թեւածող, տարտամ, ուժաթափ հոգիին թեւաբախումներուն շուրջը կը լսես՝ զանոնք կարդացած պահուի:

Անուց մը, Տգեղը, Վրեժը, Աղօթքը. բոլոր այս նորավէպերը իբրև քերթուած կրնաս կարդալ, այնքան ներդաշնակ, այնքան նուրբ գրիչով մը արտայայտուած են:

Շա՛տ ուշ, ինկած կիները, և Գեղեցիկ...ը, միւս նորավէպերէն աւելի երկար և խղճամիտ ու սուսնասիրութեամբ մը զըրուած, սիրատանջ հոգիներու իրական, ցաւակոծ պատմութիւններն են:

Հրաշալի նկարագրութիւններ ունի, որոնցմէ շատ քիչ անգամ կ'արդացած ըլլալ կրնամ խոստովանիլ համարձակօրէն: Ջղուտ, մռայլ, բանաստեղծ տղայ մը՝ կնոջ մը երկնային դեղեցկութենէն շլացած, յափշտակուած, տեսէք ի՞նչ կ'ըսէ անոր.

«—Ինչ ինչ ուղածիս չափ չեմ կրնար

ըմբռնել. ի՞նչ բարձրութիւն է ատ որուն հասնելու համար զո՛ւր կը ջանամ, և միշտ ցնորք ունիմ՝ ինչպէս վիհի մը եզերքը: Պիտի ուզէի սիրել քեզ, ինչպէս տակաւին մարդ մը սիրած չէ աշխարհիս վրայ. ու չեմ կրնար: Քեզի համար կեանքս հիմակ, հիմակ, գաւաթի մը պէս փշրելու աստիճան ինքզինքըս մոռնալով է որ կը սիրեմ քեզ, ու կը զգամ, աւա՛ղ, թէ քիչ է այդ սէրը, և քեզի անարժան...:

Ի՞նչ ուժգին սէր, ի՞նչ բարձր, հզօր պաշտում:

Եւ երեւակայեցէ՛ք, ամբողջ իր գրութիւնները այս ներդաշնակութեամբ, ուժովը, թափերովը արտադրուած են, և Մալէզեան չունի բառ մը, խօսք մը, նախադասութիւն մը որոնց աւելորդ ըլլալը միտքէդ անցընես:

Ինկած կիները, իր նորավէպերուն մէջ, ամէնէն ցաւգինն է, ախտաբոյրը, հեշտագրիւրը:

Ինչպէս միւսներուն մէջ, հոն ալ դարձեալ յաւիտենական հիւանդը իր գոյութիւնը զգացնել կուտայ: Կը ճանչնամ անձեր, որոնք այդ նորավէպը կարդալով, լացած են, և ախտաւոր հոգիներուն հանդէպ մասնաւոր արգասատանք մը, ցաւը ըմբռնող մարդու իրենց կարեկցութիւնը ուզած են ցոյց տալ:

«Հեղձուցիչ հազ մը պոռթկաց և իր խօսուածքը կիսատ մնաց: Քչիկ մը բօսիօնէն տուի: Բրտնաթոր, պարտասած, պահ մը անշարժ մնաց ընկողմանած, անխօս, աչուրները վրաս պարտցնելէն հիւանդի ջախջախիչ հետաքրքրութեամբ մը»:

Նորավէպը սապէս կը վերջանայ.

«Նինէդ, սարսափահար, բոպիկ մատուրներուն ծայրը կոխելէն, մօտեցաւ անկողինին, գունատ, ու դողդալէն. վեր վերցուց իր սիրահարին սառ գլուխը, և դիակը ինկաւ իր թեւերուն վրայ...»:

Սարսափելի չէ՞ ասիկա: Բայց հակառակ այս ցնորեցուցիչ նկարագրութիւններուն, հակառակ տառապողի հիւժումներուն և աստիճանական, ընդվզեցուցիչ քայքայումներուն, նորէն հաճոյքով կը կարդաս զանոնք, լալով երբեմն, ցնցուելով, գալարուելով:

Պէտք է կարդալ բոլոր իր նորավէպերը, Մալէզեանի տաղանդին վրայ ճշգրիտ և որոշ գաղափար մը ունենալու համար, տաղանդ մը որ իր ցնցող, հատցնող գրգռումներուն մէջ, տեսակ մը բնական տարտամութեամբ, մեղամաղձութեամբ, բացարձակապէս կը զանազանուի միւս գրողներէն, և մեր գրականութեան մէջ, Դուրեանէն վերջը, ինքն է որ կը մշակէ, — աւելի՛ կ'արտայայտէ, — այն սիրոյ զգացումները, գաղափարները, տուայտումները, մոլորումները, որոնք իրարու միացած, իրարու մէջ ձուլուած սիրելի դէմք մը կը դարձնեն Վահան Մալէզեանը, որուն վրայ հիանալու համար կը բաւէ նոյն իսկ իր մէկ գրութիւնը կարդալ:

Բ.

Հելուան ու Ինքերլաքըն ո՛չ ոք այնքան բանաստեղծականօրէն կրցած է նկարագրել, այն հիւանդարոյր, հեշտախտաւոր դրախտները «ուր հոգիները կ'իտէանան»: Եւ վայրկեան մը անկարելի վորձութիւնը կ'ունենամ հոս ամբողջովին ընդօրինակելու այդ երկու չքնաղ արձակ քերթուածները: Որոնց մէկ մասին արտատպումը թերեւս ամբողջութեանը միաս մը բերէր: Գիծերու, տարտամութիւններու, ստուերներու, զանալներու, երանգներու այդ ծիածանումը, այդ դիւթախազը իր գրչին նրբութիւնը, փափկութիւնը կը խորհրդանշանեն: Իտէական բան մը կայ միշտ հոն, իրենց մաքուր, անըջային քողին տակ պահուըտող հեռաւոր աղջիկներէն գողցուած նայուածքներուն պէս: Նկարագրութեան գլուխ — գործոցներ, գոհարներ են Ինքերլաքըն ու Հելուանը. չեմ կարծեր որ մէկը ելլէ չափազանցուած կարծէ հիացումս: Գոց ընել պիտի ուզէի զանոնք, երաժշտական գրականութեան այդ անըստգլուտ հատուածները, որոնցմէ այնքան քիչ կը համրէ մեր գրականութիւնը:

«Համբոյրներու գունագեղ ծիծաղին տակ, կը գրէ Լեզնեքը արձակ քերթուածին մէջ, անոնք որ անգամ մը սիրեցին իս, խաբելու համար, հոգիիս մէջ — անտառի թռչունի պէս զուարթ երբեմն — թրթռացուցին օծութիւնը ջահերու որ կը մարին»:

Բայց քանի որ սկսանք, չարունակենք, չէ՞ :

«Արչալոյսի ճերմակութեան պէս փափուկ կ'ընեն, յաճախ նրբազայեալ, մին՝ երեսնու մաղերով հասարակածի ծաղիկ, միւսը՝ ոսկեհիւս կողով յափուկի, հիւրիկի և լեւակի, ուրիշ մը՝ կապոյտ երկկնքի փշուր երազ մը, ամէնքն ալ սիրող... մինչև որ սիրուին :

«—Կը սիրես հեռուի երգերը, դողդոջ գիծերը, տարտամ գոյները, չորցած վարդերը... սիրէ՞ մեզ ալ հեռուէն :

«Ըսին ամէնուրեք պահուն ու մոռցան իս :

«Անոնց համար որ իս սիրեցին՝ մոռնալու տրամադիր, հիմակ ցոլքեր՝ որոնց մարմինը անհետացած է արդէն, հաւատքի չափ թանկագին յարգանքներ ունիմ :

«Արցունքի պրիսմացումին մէջէն անոնք աւելի գեղեցիկ կը գտնեմ քան երբոր կը խոստանային յաւիտեան սիրել :

«Եւ որպէս զի չի գգամ թէ հոգիս աւերակ մըն է հին սէրերու, ո՛հ, սին անուրջի մը ստութեամբ լեցնելու համար պարապը լքումին, կը խորհիմ թէ անոնք ո՛չ թէ սրտէս, այլ կեանքէս դացին հեռու :

«Ու անդարձ սիրոյ սուգին մէջ միտած, կը սիրեմ չարունակ այդ հուրինները որ մոռցան, և ինծի կը թուին նայիլ իրենց մեռած աչքերուն մէջ՝ որոնք դեռ պիտի սիրէին իս... » :

Սիրուելու այս պապակը, իր գործին ամէն մէկուն մէջ ալ կըղգացուի հաւասարապէս : Տարօրինակ սէր մը, ընդվզեցուցիչ, չարչարող պաշտում մը :

Պիտի ուղէի հանդիպիլ աղուոր,

Բայց անգութ կընոջ որ սէրս անարդէ,

Այդ սէրն որ կ'աճի ինքնին ամէն օր :

Սիրտս իրը միայն, չի սիրուած անկէ,

Պիտի արօրիէ անով յաւիտեան,

Երջանիկ՝ քանզի յագուրդ չունի ան :

Եւ ուրիշ ոտանաւորի մը մէջ.

Սէր մը ջիղի, քան երազի, համբոյրի,

Աս է հիմակ խօլ ցանկութիւնն իմ

սիրտին :

Համակ սարսուռ, համակ տենջանք

մ'որ կ'այրի,

Անէծքէն վերջ պաղատելով վերստին :

Սիրելու այս միգապատ ըղձանքը գրեթէ կարելի է գուգորդել մահուան այն ցուրտ գաղափարին հետ, բան մը զոր Մալեղեան ալ չի չփոթեր իրարմէ ապահովաբար, քանի որ միշտ այդ երկու գգածութիւններով տըւայտած, օրօրուած է, իր բանաստեղծի երեւակայութեանը շինած վէտվէտումի, ծիրկաթինի պրիսմակուող աշխարհին մէջ :

Սրտիս վէրքը չի գոցուիր դեռ, միշտ կը ցաւի,

Հիւանդ մըն եմ. վերջալոյսին պէս տակաւին.

Լոյսի մաշանքն ունի ան, ջիղս ալ՝ կորովի.

Իրիկուան ցօղն ունին անյոյս ախտաւորներ.

Ջերմին ժամն է, ժամը մահուան, արցունքներու.

Դոյրս ալ երբոր մեռաւ, աւաղ, իրիկուն էր :

Հիւանդ եմ ջիղերս, և սիրտըս՝ վրդով, կը թուի երբեմն որ մահուան կ'երթամ :

Ամէն օր քիչ քիչ հոգիս կը մեռնի :

Ո՛հ, ինծի չող մը, լոգանք մ'արեւու,

Դիչ մը ժպիտ և մեղկ լոյսը լուսնի :

Ինք որ միշտ տրտում է ու կը տառապի, զինքը չըջապատող իրերուն հրճուանքը սարսուռներ կը պտըտցնէ իր երակներուն մէջ :

Անիրաւ կը թուին այդ նուագները՝ և ուրախ՝

Անոնց համար որ, վշտակիր են ու սգաւոր.

Ուրախ խաղերն իսկ ամէնէն տխուր և դանդաղ,

Ոքովհետեւ սիրտս տրամօրէն

կը հիւժի այսօր :

Ու այսօր չէ միայն, ամէն օր, ամէն վայրկեան՝ այս հիւժումը, տարփանքի այդ գինովութիւնը :

Իր քրոջ՝ վաղամեռիկ Տիկին Սաթենիկ Մսերեանի դադաղին վրայ ոտանաւոր մը

կարդացած է, յուզարկաւորութեան պահուն,
որ սապէս կը վերջանայ.

Կը մեռնին մաքուր հոգիներն, աւա՛ղ,
եւ չատոնց քուկդ ալ կը մեռնէր,
հէ՛գ կին,
Քանզի դաւկահար հոգիները վաղ՝
Բզգալ գիտնալուն համար կը մեռնին:

Ուրիշ ոտանաւորի մը մէջ կը խնդրէ իր
սիրականէն որպէս զի սենեակին մէջ լոյս
չվառէ:

Երբ գերեզմանէն մինչև յաւիտեան,
Աչքերէն ներս ու հոգւոյն մէջ, մո՛ւթ է.
Երբ կընծջ կեանքին, նոյն իսկ մարդ-
կութեան
էն մեծ խորհուրդներն, ու սէրը,
գրեթէ,

Կը սիրեն խաւարն... ա՛հ, բիծով
Մութը մ'արիւններ, մութը իմ սիրտս է:

Սյդ կիւսը, որմէ կը ներշնչուի, և որ
իրեն սիրել կը սորվեցնէ, երեւակայա՞մ էք
դուք.

Նուրբ թաղար մը՝ գեղեցկութեան և
տխրութեան

Ծաղիկ կարծած, թիթեռնիկներն իրեն
կուգան:

Կապոյտին մէջ թաթխուած հոգին
չունի տենչեր,

Լիւակներու մէջ կ'երազէ, բայց չի
սիրեր:

Վասն զի.

..... կարծես ամէն օր

Իրար կը խաբենք՝ սիրոյ ծարաւի:

Ու յետոյ.

Կը կարծենք, աւա՛ղ, սիրել խենթի
պէս...

Առանց ուղեւոր՝ արդեօք չե՞նք սըտեր:

Ո՞վ գիտէ, պուպրիկս. դուն իս կը
սիրես,

Եւ ալ քեզ, մեղի պէս կ'ընեն շատեր:

Կը տեսնէք այս տարօրինակութիւնը:
Վայրկեանէ վայրկեան փոխուող, երփներ-
ժուող սէրը, զոր կըզգայ սակայն ինք, բա-

նաստեղծը, և որուն աղդեցութիւնը այնքան
ցաւազին է, որքան աղուոր՝ անոր արտա-
յայտութիւնը:

Ինչո՞ւ այս տառապանքը, ինչո՞ւ այս
ինքնալկուով պղտիկ թեթեւ թռչունի մը
համար, որ խոյս տալ կ'ուզէ մեր ձեռքէն
ամէն վայրկեան, երթալ թառելու՝ ուրիշ
աւելի հաճոյալի, թերեւս աւելի դրախտային
մթնոլորտի մը մէջ:

Ո՞վ ներշնչեց, ուրկէ՞ կուգայ արդեօք
այս միամտութիւնը սիրոյ մէջ, քանի որ
ատեն մը, երբ նոյն բանը կը խորհէինք, ու
չէինք կրնար համարձակօրէն յայտնել, և
յետոյ երբ օր մը մեր բանաստեղծութիւնները
սիրերգել կըսկսինք, ու ուրիշ օր մըն ալ երբ
վայելելուն հաւանականութիւնը կ'ընդունչ-
մարենք, քանի որ միշտ ասանկ կ'ըլլայ, և
մանաւանդ ինչո՞ւ ինքզինքնիս հատցնենք,
տանջենք անանկ բանի մը համար, որ գրեթէ
չարժեք:

Ու ասիկա կ'ըսենք, և դարձեալ սիրոյ
շուրջն է որ կը դառնան մեր բոլո՛ր բանաս-
տեղծութիւնները, չենք գիտեր ինչո՞ւ համար:

Դ.

Պոլիս գտնուած պահուն, դժբաղդաբար
չկրցայ վահան Մալէգեանը անձնապէս ճանչ-
նալ, բան մը որուն համար չափազանց կը
ցաւիմ: Բայց ինչպէս որ կը վկայեն զինքը
քանի մը անգամներ վայելողները, շա՛տ
համակրելի և շա՛տ զգայուն երիտասարդ-
մըն է եղեր, և արդէն մարդ տարբեր են-
թաղրութիւն մը չկրնար ընել իրեն մասին,
բանաստեղծին քերթուածներն ու նորավէ-
պերը կարդալէ ետքը: Մօտալուտ տեսու-
թեան մը սպասելով հանդերձ, մտամփոփման
պահերուս մէջ երբեմն զինքը կ'երեւակայեմ,
բանաստեղծներուն կողմէ հնարուած այն
փղոսկրէ շքեղ աշտարակին, աւալոնեան
կապոյտ կղզիի մը մէջ, որ եթերէն զգեստ-
ներ հագած, հրեշտակային, երեւակայուելիք
ամէնէն անստգիւտ, փափուկ, մաքուր, երա-
զային հուրին քովը ոտքի վրայ, հեռուի
մշուշոտ մութին մէջէն, ուրուականի մը
գալը կ'ընդունարէ: Եւ կը շարժի, մահուան

ցուրտը իր երակներուն ու աչքերուն մէջ, կը գրկէ, կը համբուրէ, կը գգուէ, կ'օրօրէ իր էլվիրը, և զայն չկորսնցնելու յաւիտենական, անյազ ըղձանքի մը մէջ, կըսպասէ անհուն գարունի մը, որ գայ իր ընդարմացած, պաղած անդամները վերկենդանացնել: Եւ այդ գարունը, — սիրոյ գարունը, — որ կ'ուշանայ գալու, և որ չա'տ հեռուն կը գտնուի կարծես, անձրեւոտ առտուան մը իր միգամած, թանձր տարտամութեանը մէջ ընկլուղած, միշտ հեռուէն կը խնդայ սիրայոյ հոգիներուն վրայ: Ճակատագրային ցաւազին խաղով մը, բանաստեղծը գերբնական ուժէ մը ցնցուած, անգամ մըն ալ կը նայի նորէն իր շուրջը ու հեռուն, և յետոյ յուսաբեկ, մահուան ու տրտմութեան ցողովը թրջուած, կ'իյնայ անկենդան, կապոյաներու այդ վէտվէտող անըջանքին մէջ, ճերմակներու, բեհեզներու, ժապաւէններու մէջ աղուորցած ուրիշ գեղանի բայց ցուրտ կնոջ մը գիրկը, հոն երազելու համար բոլոր այն վայելքները, հեշտութիւնները, որոնց ունայնութիւնը ինք ուրիշներէ չա'տ աւելի ուժգին կերպով զգացած է այս աշխարհիս վրայ, և այդ անվերջ, անզարթնում գիրկընդխառն ու հին երազանքին մէջ, իր սրտի ցաւերը, հոգեկան հիւժմամները, վերջնապէս մոռցնել տալով, ամէնէն անուշ, ամէնէն անխաղախ դիւթութիւնները պիտի մատուակուին իրեն:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՄԷՋ

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

Ա.

Երկինք յանկարծ զուարթացած էր Զատիկի այն առաւօտուն: Գեղեցիկ արեւ մը կ'իջնէր շուտափոյթ ցրուած ամպերուն մէջէն, նշմարել տալով կապոյտ երկինքին սիրուն անկիւնները, և իր անցած միջոցին՝ իրենց առաջին տերեւները հազիւ բացած ծառերուն վրայ ցողի կաթիլներ կը փայլէին աղամանդներու և մարգարիտներու պէս:

Տակաւին դադջ այս արեւը — դարնան օրհնեալ և անակընկալ համբոյրը — թափանցած էր ընդարձակ սրահի մը մէջ, կրկնակի կարգերու վրայ շարուած փոքրիկ անկողիններով մանկանց նորակառոյց Հիւանդանոցի մը, զոր կանացի դթոտ սիրտ մը բարձրացուցած էր Բարիզի արուարձաններէն մէկուն լայն ու ողաւէտ մէկ փողոցին մէջ:

Տօնի օր մըն էր այս խեղճ հիւանդներուն համար, ոչ միայն նոյն օրուան Զատիկի այս փառաւոր տօնին առթիւ, այլ արեգակին փայլալանքին պատճառաւ ալ, — ամպոտ և տխուր այնքան չաբաթներէ վերջ առաջինը, — որ կուգար իր պայծառութեամբ յանկարծակի դիւթել վշտի այս մեղամաղձոտ պատըսպարանը:

Եւ յետոյ յետոյ առանց կանխաւ բացայայտ բան մը խոստանալու, իմացուցած էին հոն պատսպարուող և խնամուող մանուկներուն թէ՛ բարերար Տիկնանց խնամակալութիւն մը, վեհագի հիմնադրուելոյն օրինակին հետեւելով, պիտի գար իրենց նուէրներ բերելու: Որով ուրախութեան ճառագայթ մը կը լուսաւորէր այս փոքրիկներուն նայուածքը, և պահ մը ամէնէն տկարներն իսկ, անոնք որ երեսէ թողուած էին, զօրս ոչ ոք կուգար տեսնել, կը ժպտէին ի տես սիրուն ու նկարուած հաւկիթներու, անշուշտ մէկ քանի չաքարեղէններով միասին զօրս գեղեցիկ տիկնանք պիտի դնէին իրենց վերմակներուն վրայ, սիրուն խօսքեր ուղղելով իրենց:

Բաղմաթիւ այցելուներ կային այն օրը, ընդարձակ սրահին մէջ: Անոնք որ ընտանիք ունէին, իրենցներէն մէկին հոն դիմելը կը տեսնէին. խեղճ մայրեր, փոքրիկ քոյրեր, հորաքոյր մը, մօրեղբայր մը, հօրեղբորորդի մը, հօրեղբորուստր մը, խրատներ ու խրախոյսներ կը շալլէին անոնց:

Անկողիններէն մէկին մօտ մարդ մը նստած էր, տխուր և գաղանի վշտացեալի մը ձեւով:

Թէեւ իր հագուստը նախանձելի բան մը չունէր և իր տփռոյն նիհար դէմքը երկարատեւ նեղութեանց դրոշմը կը կրէր, սակայն իր

դիմագծերուն մէջ բարձր դասու պատկանող վայելուչ—գրեթէ ազնուապետական—բան մը և իր խոհուն աչքերուն մէջ իմաստութեան արտայայտութիւն մը կար:

Հագած սև վերարկուն լաւ կտրուած էր, թէև շատ ժամանակէ ի վեր գործածուած:

Իր սև մօրուքը, բազմաթիւ սպիտակ թելերով խառն՝ անխնամ էր, բայց ձեռքերը որոնցմով ջղաձգօրէն կը շփէր զայն, երկար և սրածայր էին:

Իր առջև, անկողնիկի մը մէջ, բարձերու կրթնած, մանուկ մը նստած էր որ թէև եգիպտացորենի հասկի մը պէս դեղնագոյն էր, բայց անմիջապէս կը գուշակուէր թէ անոր զաւակն էր: Երկուքն ալ արդէն իրարու կը նմանէին, իրենց ձուռնէ դէմքով և ձակտին ձեւովը:

Երկար հիւանդութենէ մը ուժաթափ եղած, բիբերը տենդէն տակաւին փայլուն մնացած՝ փոքրիկը լուռթեամբ հայրը կը դիտէր, աւանց խօսիլ համարձակելու, ոչ իսկ բառ մը արտասանելու, մինչդեռ բարձր պատուհաններէն իրենց վրայ կ'ողողէր Զատիկի պայծառ արեւը:

Բ.

Ռօժէ Մարսօլ սերած էր բարի քաղաքացիի մը սերունդէն, բայց որք, անժառանգ և հարուստ ազգականներէ զուրկ ըլլալով՝ ապրելու համար միմիայն իր ճարտարապետի տաղանդը ունէր որ ընական և իրական էր, սակայն չէր յաջողած դեռ ևս այդ մասին զրական ապացոյցներ տալ: Ասով հանդերձ, կրթեալ զարգացած ու արուեստասէր ըլլալով, ամէն կողմ կը յաճախէր:

Իր մօրը բարեկամուհիներէն Պառնոնուհի Էրպօի տան մէջ անգամ մը պատահած էր Օրիորդ Ժանի, տ'Օրվալ Մարքիզին աղջիկը, թուրէնի ազնուական ընամանիքներէն մէկուն շառաւիղներէն: Աղջիկը քսան տարու էր և հիւսիսի կերպով գեղեցիկ, գիրուկ, թխադէմ, գեղեցիկ աչքերով և մազերով, բարձր հասակով, վերջապէս մէկը այն առանձնաշնորհեալ էակներէն որոնք իրենց ճամբուն վրայ գովեստի մրմունջներ արձակելու կը մղեն մարդը: Անգամ մը Ռօժէ պատիւ ունեցաւ

անոր հետ պարելու և համակրեցաւ անոր: Այնպէս երեւցաւ իրեն թէ օրիորդն ալ զինքը յարմար գտած էր իր ճաշակին: Այս առաջին հանդիպումը ձմրան սկիզբներն էր: Քանի մը շարաթ վերջ՝ Ռօժէ սաստիկ սիրով բորբոքած՝ կարծես ինքզինքը կը խաբէր սին ու փայլուն յոյսերով, թէև իրենց ցեղային ու նիւթական վիճակներն անանցանելի հեռաւորութիւն մը կը դնէին իրենց միջև:

Օր մը, երբ երիտասարդ ճարտարապետը Պ. տ'Օրվալի տունը գնաց անոր հետ տեսակցելու համար, պատասխանեցին թէ մարքիզը բացակայ էր: Ուրիշ երկու անգամ ևս եկաւ հնչեցնել Սէն—Տօմինիկ փողոցին հոյակապ ընակարանին դրան զանգակը. առանց ընդունուիլ յաջողելու:

Արգելքը իր եռանդը արծարծելու միայն ծառայեց, թէև իր արժանապատուութիւնը վերաւորելով: Իր հպարտ հոգին նախատինքի պէս բան մը զդաց. դոնէ թոյլ տային իրեն իր միտքը բացատրելու, իր խնդրանքը ներկայացնելու... Մեծ ծրագիրներ յղացած էր, որոնցմով կը կարծէր համոզել Պ. տ'Օրվալը և անոր հաճութիւնը ստանալ:

Միւս կողմէ, քիչ քիչ անխորհուրդ, կոյր ատելութիւն մը սկսաւ տածել Մարքիզին հանդէպ, և որոշեց՝ որ և է կերպով տեսակցութեան արտօնութիւնը ստանալ, զոր—իր կարծիքով—անիրաւօրէն մերժած էին իրեն: Կը փափաքէր հպարտ ազնուականին հետ դէմ առ դէմ գտնուիլ, անոր հետ խօսիլ:

Իրիկուն մը Մարքիզն ու իր աղջիկը Օքերա երթալու համար կառք նստած միջոցին, Ռօժէ կանգնեցաւ անոնց առջև.

—Պարոն, պէտք է ինծի մտիկ ընէք, գոնէ վայրկեան մը...

Խիստ պաղ կերպով Մարքիզը պատասխանեց.

—Պարոն, զձեզ ճանչնալս չեմ յիշեր... եթէ ըսելիքնիդ գործի վրայ է, վերակեցու մը ունիմ:

—Խնդիրը ամբողջ կենացս երջանկութեան վրայ է, գուցէ նաև ձեր աղջկանն ալ...

Մարքիզը աւելի հպարտութեամբ և կըտրուկ ձայնով մը պատասխանեց.

— Օրիորդ տ'Օրվալ երէկուընէ ի վեր նշանուած է Թրէքորի կոմսին :

Ռօփէ ցատկեց, յուզման անբացատրելի խռովութիւն մը առաջ եկաւ իր մէջ, իրեն այնպէս կը թուէր թէ իր ստացուածքը կը կողոպտէին. ալ չի խորհեցաւ, իր բնաւորութեան սաստիկ եռանդը յաղթեց իրեն և յարձակեցաւ Մարքիլին վրայ՝ միասելու ձեռով մը, որ վախցուց Օր. տ'Օրվալը և յայտնեց հօրը թէ այս անձը զոր պահ մը սիրած էր, զայրացկոտ և ատելի էակ մըն է և որուն համար անյաղթելի խորշանք մը միայն կը զգայ :

Սպասաւորները փութացին, նախապարձակը բռնեցին : Անոնցմէ մէկը պնդեց իսկ թէ՝ անոր ատրճանակ քաշելը տեսած էր : Երիտասարդ ճարտարագետը արդարութեան յանձնուեցաւ և մէկ քանի ամիս բանտարկութեան դատապարտուեցաւ : Երբ բանտէն ելաւ, խմացաւ թէ Օր. տ'Օրվալ ամուսնացած էր : Բարիզը սարսափ կ'աղդէր իրեն : Սաստիկ ջլածութեան մը մէջ էր : Իր բարեկամներէն բոլորը մը—այն հաղուազիւտ բարեկամներէն որոնք ձախորդութեան մէջ իսկ հաւատարիմ կը մնան,—բնաւ իրեն :

— Սիրելիս, մաքուր օդի և գիւղական կեանքի պէտք ունիս... հո՛ն միայն, գեղեցիկ մայր բնութեան մօտ. նորէն պիտի գտնես առողջութիւնդ. գիւղ դնա՛ :

Եւ Ռօփէ, որ մէկ քանի փոքրիկ խնոյողութիւններ ըրած էր, իր երկիրը դնաց. Վօփերու մօտ պղտիկ աւան մը—ուր իր արկածին լուրը բարեբաղդաբար չէր հասած : Այս կեանքը նպաստեց իրեն. ամառ էր, ամէն ինչ կ'երգէր : Մանկութեան ընկերուհի մը գտաւ հոն, որ դուշակեց իր գաղտնի վիշտ մ'ունենալը և ջանաց անոր մխիթարիչ և հաճելի ըլլալ : Ռօփէ մոռացութեան և սիրոյ պէտք ունէր, իր սիրտը բացաւ անոր, և իր թշուառութեան միացուց աղջիկն ալ. Բարիզ վերադարձան, ուր Ռօփէ սկսաւ գործ փնտռել : Սակայն դժխեմ բաղդը կարծես կը հալածէր զինքը : Երկու տարուան պայքարէ վերջ չի կրցաւ յաջողիլ տեւական պաշտօն մը ապահովելու իրեն. կինը, որ շարունակած էր—հակառակ իր անտանելի վիճակին դժ-

ուարութեանց անձնուէր ընկերուհի մը և բարոյական ճամբարիտ նեցուկ մը ըլլալ իրեն, մեռաւ զաւակ մը ծնելէ վերջ, զոր հազիւ ժամանակ ունեցաւ իր սառած չրթներով վերջին անգամ համբուրելու :

Չորս տարի անցած էր, օրական հաց մը գտնելու կատաղի և մաշեցուցիչ ջանքերու, պատրանաց և նուաստութեանց մէջ, վշտի ամէն տեսակ տանջանքներով :

Ռօփէ անձնապաշտ պիտի ըլլար, եթէ իր տղուն, իր պաշտելի փոքրիկ ժագին ներկայութիւնը չըլլար : Որ այնքան կը նմանէր իր սիրելի կնոջը : Չաւկին համար միայն կը պայքարէր, կը դիմանար, իր դոյութիւնը կը պահպանէր, ինչ գործ որ ներկայանար կատարելով : Նոյն իսկ օր մը գնաց ճաշարան—պանդոկի մը յայտարարութիւնները ցրուելու, փոխարէն ստանալով իր զաւակին քանի մ'օրուան սնունդը, ինք գոհանալով միայն պատառ մը հացով :

Եւ տհա ժագ, իր միակ ուրախութիւնը, իր ապրելու միակ պատճառը, հիւանդացաւ ու պէտք եղաւ զայն դնել այս հիւանդանոցին մէջ, ուր հայրը քիչ մը լաւ վիճակի մէջ գտած էր զինքը, սակայն խիստ նիհար, տոգոյն, Ձառիկ դուարթ արեգակին դեղնադոյն ճառագայթներուն մէջ, որոնք սպիտակ վարագոյրներով բարձր պատուհաններէն ներս կը թափանցէին :

Գ.

Յանկարծ դուրսը աղմուկ մը լսուեցաւ, կառքեր կը կենային, դռներ կը բացուէին ու կը գոցուէին,

Քայլեր առաջին սանդուխին և նրբանցքին մէջ... Այցելու տիկինները միայն կրնային ըլլալ ասոնք, և յանկարծ ծնողաց ու հիւանդներու մէջ խոր լուութիւն մը տիրեց :

Երբ այցելուհիները մտան, կարծես անուշահոտութեանց բուրումներու ալիք մը թափանցեց սրահին մէջ, և երբ անոնցմէ իւրաքանչիւրը՝ հիւանդ մանուկի մը անկողնիին վրայ ծռելէն վերջ կը հեռանար ուրիշի մը մօտ երթալու համար, ուրախութիւն մըն էր որ կը թողուր իր ետեւէն. խաղալիքներ, զիրքեր, ծաղիկներ... և քիչ մը գգուանք :

Անոնցմէ մէկը—գէր, թխադէմ, սգազգե-
կաց կրն մը—մօտեցաւ փոքրիկ, սիրուն աղ-
ջնակի մը ձեռքէն բռնած, այս վերջինն ալ
սեւեր հագած, տօգոյն, թափանցիկ, քերորէի
մը պէս:

Ռօժէ վեր ցատկեց, և հաղիւ ղսպուած
ձիւ մը խղիւղեցաւ իր կոկորդին մէջ: Տիկինը
որ դիպ ի ժագ. կ'ուղղէր, տեսաւ այս մարդը
ու ինքն ալ դողաց իր կարգին:

Փայլակ մը շողաց իր աչքերուն մէջ, ար-
համարհանքի ու խորշանքի փայլակ մը:

Ու փոքրիկ աղջկան ձեռքը սեղմելով
ջղաձգօրէն, արագութեամբ անցաւ, կարծես
փախչելու համար տխուր անցեալի մը ծանր
դատաստանէն:

Ռօժէ հոն մնաց, իր տեղը գամուած,
նայուածքովը հետեւելով այս անակնկալ
երեւոյթին ու մրմնջեց կերկերուն ձայնով մը.

—Ան է, ան....

Այսպէս քառորդ ժամ մը անցաւ:

Սակայն խեղճ ժագ իր աչքերը կը պտտա-
ցնէր սրահին շորս կողմը և իր փոքր դէմքը
աւելի ևս տօգունած էր: Կը տեսնէր միւսնե-
րուն խաղալը իրենց բազմադոյն հաւկիթնե-
րով, մէկը միւսին ցոյց տալը, անկողնէ ան-
կողին նետելը. կը տեսնէր որ ամէն հիւանդ
գարնան ծաղիկներու փունջ մ'ունէր, որ
կարծես վերկենդանացման, ապաքինման
վրայ կը խօսէր, և ինք ոչինչ ունէր, ինք
միայն այս սրահին մէջ երեւոյ ձգուած և ար-
համարհուած էր:

Իր մանկական աչքերը, որոնք արտասուք-
ներու վարժուած էին, բայց չաա բան չէին
տեսած տակաւին կեանքի մէջ, կարծես կը
հարցնէին «ինչո՞ւ համար, բայց ինչո՞ւ համար»:

Ռօժէ այս բիբերուն մէջ կը կարդար,
անոնց պարզութիւնը ղորեղապէս աղբու-
կ'ընէր անոր նայուածքները եւ տղուն զար-
մանքը և տխրութիւնը կը հասկնար, սիրտը
կը բաբախէր ու աւելի սաստկութեամբ կը
սեղմէր տղուն նիհարցած փոքրիկ ձեռքը որ
վերմակին վրայ էր, այսքան գորովալի սեղ-
մումով մը զայն քիչ մը մխիթարել փորձե-
լու համար:

Ինքը միայն այս ընդարձակ սրահին մէջ,

ինքը միայն առանց խաղալիկի, առանց յու-
սոյ նշանակ ծաղիկի մը:

Երբեմնի սիրուն ու մանկամարդ աղջիկը
այսքան անգութ եղած էր ուրեմն:

Իր ռիւր ղինքը այսքան դառնացուցած էր:

Այդ պահուն Թրէքուրի կոմսուհին, իր պաշ-
տօնը աւարտած կը վերադառնար նոյն ճամ-
բով, միշտ սիրուն փոքրիկին ձեռքէն բռնած:

Ժագ դէպ ի հայրը դարձաւ, որ միւսնոյն
հարցումը կարգաց դարձեալ անոր աւելի
եռանդուն և աւելի նեղացած նայուածքին
մէջ «ինչո՞ւ, ինչո՞ւ»:

Տիկին Թրէքուր երկու քայլ միայն հեռի
էր:

Իր տղուն այնքան բնական այս հարցման
առջև, Ռօժէ զգաց որ իր ամբողջ հպար-
տութիւնը անյայտացած էր, և որովհետեւ
տիկինը կ'անցնէր, ձեռքերն անոր երկնցնելով,
ցած ձայնով, այլ որուն մէջ հոգւոյն ամե-
նախորունկ թեւերը կը թրթռային:

—Տիկին, ... տիկին... այս տղան ալ
աղքատ է, ինքն ալ հիւանդ է... Անոր
համար բան մը չկայ...

Կրկին սարսուաց կոմսուհին և կեցաւ: Իր
հոգիին մէջ ալ բան մը դողդղաց... բան
մը որ խղճմտանքի կը նմանէր: Քառորդ ժամ
մը առաջ, գլուխը դարձուցած էր... հիմա
փոքրիկ անկողինը և ժագը կը դիտէր որ
հոն պառկած էր—այս փոքրիկ դէմքը այն-
քան բարակցած, սպիտակ, շուշանի թեր-
թերու նման, և սակայն գրաւիչ: Եւ այս
մարդը զոր կը յիշէր թէ պահ մը սիրած էր,
ինքը, կրքի, հպարտութեան յանցաւորը,
ինքը, դատապարտեալը որ կարծես իր շնոր-
հին, կամ թէ աւելի ձիւղը, իր զաւկին
շնորհին սպասել կը թուէր:

Որքան փոխուած էր, կեանքը որքան
խոնարհեցուցած, ոչնչացուցած էր զայն:

Ու բոլոր այս անցեալէն ինչ մաս կրնար
ունեցած ըլլալ այս անմեղ արարածը որ կը
հանգչէր այդ անկողինի մէջ:

Տիկին Թրէքուրի սիրտը շարժեցաւ, ինք-
զինքը անիրաւ և անգութ գտաւ, գրեթէ
ինքիւրմէն ամօթ զգաց: Այն ատեն իր աղջիկը
դէպ ի անկողին մղկելով:

— Ժիզէլ, տո՛ւր այս փոքրիկ տղուն քովդ մնացած հաւկիթները, ու նաև չփակիդ մէջի փունջը, յետոյ համբուրէ զայն սիրելիս, ինչպէս պիտի համբուրէիր եղբայր մը որ զքեզ չատ սիրէր:

Ո՛հ, Ժագ այսքանին չէր սպասեր: Հաւկիթները, փունջը արդէն սիրուն էին, բայց այս գեղեցիկ աղջկան համբոյրը, իրեն որ այնքան կը փափաքէր քոյր մը ունենալ: Ո՛հ որքան երջանիկ էր:

— Փրկուած է, այնպէս չէ՞, հարցոյց Տիկին Թրէքուր հիւանդ աղջկան հօրը:

— Այո... բժիշկը այնպէս ըսաւ:

— Ի՞նչ պատուիրեց

— Խնամքներ... լաւ սնունդ... գիւղ կամ ձով, թերեւս տեղ մը պիտի խրկեն:

— Իմ տունս զրկեցէք զինքը... 15 օրէն թուրէն պիտի երթանք... Այն տեղի կլիման սքանչելի է... ձեր զաւակը զուտ կաթ պիտի խմէ, զօրաւոր օդ պիտի շնչէ...

— Կուգես, այնպէս չէ՞ Ժիզէլ, խաղի սիրուն ընկեր մը պիտի ըլլայ քեզի... և վստահ եղիք, պարոն, բոլորովին բժշկուած ձեզի պիտի վերադառնայ:

— Ո՛հ, տիկին, ինչպէ՛ս շնորհակալ ըլլալ ձեզ:

— Շնորհակալ մի՛ ըլլաք... Ժիզէլն է որ զայն կը հրաւիրէ, աղաքը այս տեսակ բաներու վարժեցնելու է: Ձեր զաւակը հիւանդանոցէն ելլելուն պէս, զրկեցէք մեզի Բէնթիէվըր փողոց, 16... Կ'ապահովեմ զձեզ թէ լաւ պիտի խնամուի:

— Տիկին...

— Պարո՛ն...

Ձիրար բարեւեցին, ու յետոյ կոմսուհին և Ժիզէլ հեռացան: Հայր ու տղայ աչքերով անոնց հետեւեցան. բարի պարկներու կը նմանէին, որ իրենց ետեւէն յոյս ու մխիթարութիւն փոխած էին:

Սրահին սեմին վրայ Ժիզէլ ետին դարձաւ և Ժագին համբոյր մը զրկեց:

— Հայրիկ, հայրիկ:

— Ի՞նչ կայ գանձս, հոգիս:

— Հիմա կըզգամ թէ բժշկուած եմ:

Տղուն յստակ բիրերը կարծես հիմա զօրաւոր կերպով կը տեսնէին մարգեր, անառններ, վազուն ջրեր:

— Հայրիկ, ե՞րբ պիտի կարենամ երթալ:

— Անմիջապէս, սիրելիս, անմիջապէս:

Եւ տղուն հիացական ձայնով մը «բժշկուած եմ, բժշկուած եմ» կրկնելը, երազի մէջ լսելու պէս, Ռօթէ Մարսօյ, սիրտը թեթեւցած, փրկուած շեշտով մը մրմնջեց:

— Ես ալ բժշկուած եմ, քանի որ ան ալ ներեց ինծի:

Ս.ՏՕԼ.Յ Ռ.Ի.ՊՕ

Թարգմ. ԵՐՈՒԱՆԻ ՍԵՎԱԶԵԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿԻ Բարձրագոյն Վարժարանի ամսավերջի հանդէսը պիտի կատարուի յառաջիկայ երկուշաբթի՝ ատենախօսական մրցումով, և երեքշաբթի՝ ընթացաւարտ կարգին վկայականներու բաշխումով: Այս կրթական արդիւնաւոր հաստատութիւնը, իր 25ամեակին լրանալուն առթիւ, գեղեցիկ ապագա րութեամբ հատոր մը հրատարակած է որուն մէջ ամփոփուած են՝ անոր հիմնարկութենէն ի վեր և այժմ դասախօսող ուսուցիչներուն անունները, ինչպէս նաև հիմնադիր Մր. Բիրսի և արդի վարիչ Տօքթ. Չէմպլըսի պատկերները: Այդ հատորին մէջ մանրամասն տեղեկութիւններ կան Վարժարանին նպատակին, ուսումնական վիճակին, ներքին կազմակերպութեանը, մուտքի պայմաններուն, գրատան, թանգարանին վրայ, որոնց կցուած է ուսմանց ծրագիրը: Պարտիզակի Բարձրագոյն վարժարանը ունեցած է, 1883էն ի վեր, 150 ընթացաւարտներ՝ որոնց մէջ կան բժիշկ, վաճառական և դիրքի տէր ուրիշ անձեր: Այսօրուան ուսանողներուն ընդհանուր թիւն է 112: Շրջանաւարտները, որոնք վերկայական պիտի ստանան յունիս 15ին, հետեւեալներն են. — Պարոնայք՝ Անդրանիկ Ս. Հիպէեան (Գընճըլար), Անդրէաս Կ. Գալեան (Ռոտոսթոյ), Արմենակ Ս. Չուհաճեան (Կ. Պոլիս), Բենիամին Հ. Զինկեօղեան (Սամսոն), Լեւոն Գ. Լյնֆիյէճեան (Կ. Պոլիս), Դադարոս Գ. Գունտուրաճեան (Եողղաս), Յարութիւն Մ. Յրէնկիճեան (Կեսարիա), Յովհաննէս Տէր Ներսէսեան (Նիկոմիդիա), Պետրոս Ա. Ալեանաքեան (Կ. Պոլիս), Պօղոս Հ. Գըլըճեան (Ռոտոսթոյ), Ռեթէոս Ս. Սիմոնեան (Կ. Պոլիս), Սամուէլ Ս. Գասապեան (Պարտիզակ):

ԼՈՒՆ ՊԱՇՏՈՒՄ



ՕՐ. Ե. Է. ԻՆ

Ինչ որ կըզգամ ըզեզ անդուլ սիրելով,
Երբե՛ք պիտի չկրնամ ես բացատրել.
Բառերն ինքնին ոչինչներ են սիրոյս փոխ,
Սերս անհուն Ե, անծայրածիր ու անել:

Գգուանցներուդ պապակալը անխըրիս,
Էութիւնըս կը տուայի ամեն օր,
Շքաբարի դալկութիւն մը, շիք առ շիք,
Կը կաթկըթի իմ հոգիես վիրաւոր:

Քեզ ժամէ ժամ ա՛յլ աւելի կը սիրեմ,
Նոր քափերով, նոր հրայրփով մը անեղջ.
Ու փու անձիդ ամբողջութիւնը վսեմ,
Գեղեցկութեան խոհուրդն եղաւ միտքս մեջ:

Կը կասկածիմ: Եւ կը վախճամ մանաւանդ,
Որ մի՛ գուցէ օր մը ասեմ երազին
Սա հասցընող մաքուր կեանքը սիրաւանդ,
Ու պաշտումիս լուսութիւնը սա ոսին:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՔԻՐԵՆԴԻ ԿՏՈՐՈՒԱՆՔ



Կիրենուս սիրտը կը նմանի սպանիական այն տուններուն, որոնք շատ մը դուռներ ունին և քիչ պատուհաններ, և ուր մարդ դիւրութեամբ կը մտնէ, բայց ամէն բան մութ ու ամէն բան խաւարին մշուշովը ծածկուած կը գտնէ հոն:

Ժ. Փ. ՌԻՍԹՈՒՐ

Մեծ իմացականութիւններուն ունեցած դժբաղդութիւններէն մէկն ալ, մոլութիւններն ու առաքինութիւնները հաւասարապէս ճանչնալ ստիպուած ըլլալնին է:

ՊԱՆՋՍՔ

Եթէ կ'ուզէք ընտանեկան երջանկութիւն մը վայելիլ, անանկ ենթադրեցէ՛ք որ աշխարհիս վրայ միակ աղէկ կին մը կայ, և թէ ճիշդ այդ կնոջ հետ է որ կապրիք:

ՍԷՐՈՒԱՆԹԻՍ

Բանաստեղծներուն ճակատագիրը շա՛տ տարբեր է: Մահը զմեզ չկրնար ամբողջապէս քայքայել: Երկրային անէացումը մեզի չհասնիր: Մենք նորէն կը շարունակենք ապրիլ բանաստեղծութեան կալուածներուն, պարիկներու աշխարհին, Սւալոնի կախարդիչ կղզիին մէջ:

ՀԱՆՐԻ ՀԱՅԵՆ

Սէրը արուեստ մըն է՝ երաժշտութեան պէս:

ԲԻԷՌ ԼՈՒԻՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌՋԱՆՈՐԴԻՆ ՄԱՆԸ



Շարաթ օրը Աղեքսանդրիայէն Աղգ. Պատ-
րիարքարան հասած հեռագիր մը ծանոյց թէ
Եգիպտոսի Հայոց առաջնորդ Տ. Յովսէփ
Եպիսկ. Այվաղեան իր հոգին աւանդեր է
այդ քաղաքին մէջ ուր Դահիրէէն գացած
էր օդափոխութեան համար:

Հանգուցեալը եօթանասունըմէկ տարեկան
էր, 1833ին ծնած ըլլալով Կարնոյ շրջա-
կայ գիւղերէն մէկուն մէջ, Հայ—Հռո-
մէական ծնողքէ: Կարնոյ վարժարանին մէջ
իր նախնական ուսումը ստանալէ յետոյ՝ կը
դրկուի Վենետիկի վանքը ուր Միսիթարեանց
ձեռքին տակ կը հմտանայ, մայրենի լեզուէն
ղատ, Քրիստոսեանի ու իտալերէնի: Կ. Պոլսի
վերադարձէն յետոյ, Տրապիզոն և Սեբաս-
տիա կ'երթայ ու այս վերջին քաղաքին մէջ
վարդապետ կը ձեռնադրուի տեղւոյն Հայ—
Հռոմէականաց առաջնորդէն. ժամանակ մը
հոն քարոզական պաշտօն վարելէ ետք,
Կարին և Մուշ այցելելով՝ Կ. Պոլսի կը դառ-
նայ և Պարտիզակ կը զրկուի իւր ժողովրդ-
դապետ: Այդ թուականին, Նիկոմիդիոյ Հա-
յոց առաջնորդն էր Ներսէս Եպիսկ. Վարժա-
պետեան որ երբ, 1874ին Կ. Պոլսոյ Պատ-
րիարք կ'ըլլայ, Այվաղեան վարդապետ՝ ա-
նոր հոգեւոր իրաւասութեան ներքեւ աշխա-
տելու ջերմ փափագով՝ 40 տունի չափ Հայ
—Հռոմէականներու հետ կը դառնայ Մայ-
րենի Եկեղեցւոյ ծոցը, 1875ին, միջնորդու-
թեամբ Նիկոմիդիոյ արդի առաջնորդ Տ.
Ստեփաննոս արքեպիսկ.ի:

Յովսէփ Եպիսկ.ի անդրանիկ պաշտօնը
եղած է Ղալաթիոյ եկեղեցւոյն քարոզչու-
թիւնը, զոր վարեց բաւական տարիներ՝ մի-
եւնոյն ժամանակ ստանձնելով Ղալաթիոյ
թաղային վարժարանին տեսչութիւնը, պահ-
մըն ալ Կեդր. վարժարանի կրօնագիտու-
թեան ուսուցիչ ըլլալով: Իր քարոզչութեան
և ուսուցչութեան շրջանին մէջ, մինչև 1888ի
վերջերը, գործօն դեր մը ունեցաւ Պատրի-
արքարանի ժողովներուն մէջ, իրեն անդամ
կրօն. ժողովի և այլն: Անկէ յետոյ, դաւա-

ռային հովուական պաշտօնավարութիւններով
անցուց իր կեանքը, Իզմիր, Վան, Պանտը-
մա—Պալքէսէր, Տրապիզոն, Կարին, և
վերջապէս՝ 1898ին ընտրուեցաւ առաջնորդ
Ռօտօսթոյի և յաջորդ տարին Ս. Էջմիածին
ուղեւորելով Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ
Ս. Հայրապետէն՝ Թրակիոյ Վիճակին վրայ:
Բայց, 1900ին, նախապատուութիւն տուաւ
Եգիպտոսի առաջնորդութեան, սրտաբեկ
թողլով Ռօտօսթոյի հայ համայնքը:

Իր չորս տարուան վերջին պաշտօնավա-
րութեան միջոցին՝ նշանակելի գործ մը չու-
նեցաւ Այվաղեան Եպիսկ. որ կ'երեւայ թէ՝
ծերութեան հասակին բերմամբ՝ մեղկ կեանքը
կը սիրէր և աւելի նիւթական նկատումներէ
կ'առաջնորդուէր. ո՛չ իսկ յաջողեցաւ դարկ
մը տալ Դահիրէի մէջ կրթական գործին:
Արդէն, իր գաւառային հովուական նախորդ
պաշտօններուն մէջ ալ յիշատակութեան ար-
ժանի բան մը չէր արած: Աղմուկէ խորող,
լուկեաց, պարզասէր եկեղեցական մըն էր
հանգուցեալը, որ թէպէտ մեծ համակրանքի
առարկայ չի դարձաւ իր գտնուած միջա-
վայրերուն մէջ՝ բայց հակակրանք ալ չի
գրաւեց իր վրայ:

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՅ ՇՈՒՐՋԸ

Մեր գրական ու բանաստեղծական տա-
ղանդները հետզհետէ կը «Քրանսան» — եթէ
կարելի է այս բացատրութիւնը գործածել՝
Հայերու կողմէ գրուած արձակ և ոտանա-
ւորներու հրատարակմանը առթիւ՝ Քրանսե-
րէն թերթի մը, Սգամպուլի մէջ: Նէմօի
ոտանաւորներուն հետ, որոնք հետզհետէ կը
վերանորոգուին՝ նոր նիւթերով ու նոր շար-
քերով՝ երեւցաւ Զօհրապի մէկ նորավէպը,
ձօկօն, Թարգմանութեամբ Տօմինօի որ միև-
նոյն անուն Մասիսի համար հայերէնի կը
վերածէր Նէմօի երկու ոտանաւորները, à la
Raoul Ponchon, Եւ ահա՛, երեւան կուգայ

Աղեքս. Փանոսեան, ինքն ալ ֆրանսերէն ոտանաւորով մը, Սղամպուլի խմբագրութեան կողմէ գնահատական քանի մը պատուաբեր տողերով առաջնորդուած: Դիտմամբ կը չեղտեմ այս վերջին պարագան: որ անգամ մըն ալ կը հաստատէ թէ եւրոպական լրագրութեան համար ալ պատշաճութեան խնդիր է՝ հաւնուած բանաստեղծի մը կամ վիպասանի մը աշխատակցութիւնը ողջունել հաճոյքով, մինչ մեր մէջ, խմբագրական այդ տեսակ նախաբան մը խեղ աչքով կը նայուի երկրորդական, չաջողած գրողներու կողմէ որոնք ջատագովանք, հաճոյակատարութիւն և մինչեւ իսկ շողմարարութիւն կ'անուանեն այդ տարրական բարեկրթութիւնը:

Աղեքս. Փանոսեան ֆրանսերէն ոտանաւոր գրելու իր նախափորձը չէ որ կ'ընէ, եւ վաղուց յաջողած մըն է արդէն՝ օտարի մը համար դժուարին այդ ճիւղին մէջ, իբր քսան տարի առաջ բանաստեղծական մրցման մը մէջ իր ստացած մրցանակով: Լեզուի այն ճկունութիւնը, հարուստ յանգերը, իմաստի նրբութիւնը, որոնք յատկանիչն են իր հայերէն ոտանաւորներուն, Լամարդինի լեզուով քերթած ատենն ալ երեւան կուգան նոյն կատարելութեամբ: Փանթղի—ոտանաւոր մը կը գրէ այս անգամ, ճարտական պատերազմէն սկսելով՝ յանդերու համար... Բրօթի կամ Պէօյլեքտէրէ ծովեղերեայ անակ մը քնակելու ամառնային երազին, մինչ Նէմօ նախամեծար կը հուշակէր Բերան: Պզտիկ վէճ մըն է ուրեմն որ տեղի կ'ունենայ երկու բանաստեղծներուն միջև, գաղափարներու հակադրութեանց յանգաւոր պարզում մը, ուր նոյնքան սրամտութիւն կայ որքան փափկանկատութիւն,—ինչ որ կրնար օրինակ դառնալ մեր կարգ մը վիճաբանողներուն որոնք իրենց մտքի բառարանին ամէնէն կեղտոտ բացատրութիւնները դուրս կը թափեն երբեմն, ընդդիմախօսին յաղթած ըլլալու պատրանքը տալու համար ինքզինքնուն:

Բայց, չիտակը ըսելու համար, հին լրագրութիւնն ալ գերծ չէր այս մեղքէն, հակառակ Փուլնջի վերջին շարթուան խմբագրա-

կանին ուր՝ Հ. Ս. Ալաճաճեան էֆ. իր երկտասարդութեան ժամանակակից թերթերը եւ անոնց վիճաբանելու եղանակը օրինակ ցոյց կուտար հիմակուաններուն: Առանց իր տարիքը ունենալու եւ իր յիշած թուականին գրողներէն եղած ըլլալու, կը յիշեմ սակայն տղայութեան օրերնուս կարգացած վիճաբանութիւններնիս, օրուան թերթերուն մէջ, որոնց կարգէն էր նաեւ Փուլնջը, որոնց վիճաբանական լեզուին և կրքոտ բացատրութեանց քով՝ հիմակուանները սալօնի լեզու կրնան համարուիլ,—թէ և փողոցային լեզուով վիճաբանողներ ալ չեն պակսիր շուրջներնիս:

Հինի ու նորի վիճաբանութեան մը ես ինքս ալ չի մղուելու համար ակամայ, կը վերադառնամ մեր բանաստեղծներուն, թող լով որ ամէն հրապարակագիր իր անձնական ճաշակը ու կրթութեան աստիճանը երեւան բերէ իր վիճաբանելու եղանակով:

Ներքեմօ ու Ալիասլան ֆրանսերէն թերթի մը մէջ կը թափեն իրենց աղուոր յանգերն ու բանաստեղծի մտացիութիւնները, զուարթ, կայտուն ոճով մը, տխուր գիրք մը կուգայ մեզի վիէննաի Միլիթարեանց Տպարանէն, Ռէթէոս Էֆ. Պէրպէրեանի Խոհեմ եւ Յուսէֆ՝ արտասուալից քերթուած մը զոր ուսուցչապետը ձօնած է իր վաղամեռ Տիկնոջ, Չարուհիի յիշատակին: Սիրուած անձի մը նուիրուած տպագիր յիշատակարան մը քիչ անգամ այնքան չքեղ եղած էր որքան այս տետրակը որուն կատարելապէս գեղարուեստական երեւոյթ մը տուած է Միլիթարեանց մամուլը: Պրակին սկիզբը կ'երեւան դէմ դէմի, երկու էջերու վրայ, Տ. եւ Տիկին Պէրպէրեանի պատկերները, 1886ին,—իրենց ամուսնութեան թուականին, ինչպէս կենթադրեմ,—լուսանկարուած, և որոնցմէ տարաբաղդ Չարուհիի պատկերին ներքեւ դրուած պզտիկ սև խաչանիչ մը կը նշանակէ անոր մահուան թուականը, 1899 մարտ 12: Գերթուածը, 46 հատուածներու բաժնուած, ողբերգ մըն է որ աւելի՛ ազդեցիկ կը դառնայ ընտանեկան երջանկութեան տարիներու և սիրասուն զաւկներու շուրջը միասին անցուած օրերու վերջնամովը զոր

այնքան զգայուն ու այնքան կենդանի չե-տերով ճողովող կ'ընէ գրագէտ—ուսուցչապետը: Հո'ն են նաև, պրակին մէջտեղը, առանձին էջի մը վրայ, իրենց չորս զաւակները՝ գեղանին ու չնորհալին Օր. Մաննիկ Ռ. Պէրպէրեան ու սիրասուն փոքրիկ եղբայրները՝ Օննիկ, Շահան, Նուրհան: Ու ճի'շդ այդ էջին դէմ, անոնց պատկերացումը սա տաղով.—

Մաննիկս հիմայ սիրուն աղջիկ մ'է գողարիկ,
Հասակ, տաղանդ մէկտեղ աճած գեղեցիկ.
Շրջանաւարտ կ'իլլէ Օննիկս այս ամառ,
Թէև ո'չ մեծ, աշխատութեամբն իւր յամառ.
Մայրնմանակ Շահանս, փոքրիկ իմաստուն,
Խորհի, գրէ, ու կ'երգէ ալ զերթ թռչուն.
Նուրհան ճշգրիտ տիպս է, ինչպէս մայրն ըսէր,
Թիթեռնիկ մ'է, դեղին կապոյտ՝ իր թեւեր:
Մարմնով, հոգով գեղափրթիթ զաւակաց
Ի'նչ հեշտանք է վէտվէտումը չուրջ ծնողաց:

Որչափ ալ բանաստեղծութեանց շուրջը պտտկիլ ուղեցի այս անգամ,—Փանթէզի ոտանաւորներու շուրջը մանաւանդ,—հեռանալու համար տխուր նիւթերէն, նորէն՝ անզգալաբար մղուեցայ նիւթերու տրտմագոյնին, մանկամարդ կնոջ մը մահուան յիշատակին, իրեն ձօնուած քերթուածներու հատորին առթիւ զոր կը գտնեմ գրասեղանիս վրայ, իրրե օրուան դիրքը, մանաւանդ որ անոր վաճառման հասոյթը նուիրուած ըլլալով Գալֆեան Որբանոցի սանուհիներուն, բարեգործութեան զգացումն ալ կուգայ իր բաժինը բերել:

Անոնք իսկ որ չէին ճանչցած Տիկին Զարուհի Պէրպէրեանը, մեղքցան զայն՝ երբ իմացան մահուան գոյժը, վասն զի ո'չ միայն երիտասարդ ամուսինն ու մայրն էր որ կը պակսէր ընտանեկան յարկէն, այլ ներշնչողը, օժանդակողը, խրախուսողը այն արդիւնաւոր ուսուցչապետին ու վարժարանի հիմնադիր—վարիչին որ Ռէթէոս Պէրպէրեան կը կոչուի և որուն անունը սերտիւ կապուած է աւելի քան երեսուն տարուան ժամայնակամիջոց մեր մէջ կատարուած կրթական գործին ու տեսնուած յառաջդիմութեանը: Այս տեսա-

կէտով, իր վաղամեռ Տիկնոջ անունը ծանօթ էր հայ համայնքին ամէն դասակարգերուն որոնք, հեռուէն, կը կուսէին անոր կատարած բարերար հրեշտակի դերը՝ Պէրպէրեան վարժարանին ու տան — որոնք անբաժան են —մաքուր ու խաղաղիկ մթնոլորտին մէջ, կրթական օրօրան մը ու վառարան մը՝ Սկիւտարի բարձունքին վրայ:

Այդ ընտանեկան յարկի երջանկութիւնը ու անոր յաջորդող սգաւոր ամայութիւնը այնքան կենդանի տողերով պատկերացուած են Խոնի եւ Յուսէին մէջ, որ կը փորձուիմ հատուած մըն ալ ընդօրինակել հոս, թէև ամբողջական ընթերցումի մը վայելքը խանգարած ըլլամ անոնց որոնք այս վայրկեանիս կուղեն ստանալ այդ հատորիկը.—

Ո'հ, Աստուած իմ, ամայութիւնը յարկին
Ուրկէ մեկնած է զայն լեցնող քաղցր հոգին:—
Տաճարն է այն, ոյր կործանած է խորան,
Ու ա'լ դադրած պաշտամանց կարգ սրբազան,
Վառարանն է ուր չի՝ վառի այլեւս հուր,
Մարմինն է զոր կեանքը թողբ է թափուր:
Ու հոն համայն յիշատակ է տխրությոյ,
Ամէն կէտէ արցունքի չիթ մ'իյնայ լուռ.
Հոն ամէն բան լի էր իրմով, ու հիմայ
Անշունչ իրք ալ թուին հարցնել «ո՞ր է նա»:
Շրջանակ մ'է տունն ոյր նկարն է ինկեր.
Սեւը չորս դին սրտից սո՛ւգը գծագրեր...:

Այս տրտմադրեցիկ պատկերը՝ միթէ պատկերը չէ՞ այն բոլոր յարկերուն ուսկից սիրուած էակ մը, կին մը, քոյր մը, ծաղկատի աղջիկ մը հեռացած են անդարձ կերպով և որ կը մնայ նկար մը «ոյր շրջանակն է ինկեր»:

Բանաստեղծութեանց շրջանակէն չի հեռանալ մտադրեցի, և քիչ մըն ալ կուղեմ մօտենալ Մայսիսի մէջ հրատարակուած ոտանաւորներուն, ըլլան նորերու և նորագոյններու՝ ըլլան հիններու: Նախ դիտել պիտի տամ Խմբագրութեանդ, բարեկամաբար, թէ «Հիններու բաժին»ը կամ «Մոռցուած էջեր»ը ինչո՞ւ չերկրորդուեցաւ. անոր համար արդեօք որ լրագրական հին հաւաքածոնք,

ՅԱԶՈՐԴ ԹԻՐՈՎ

երսուն — քառսուն տարի առաջուան թեր-
թեր ու օրացոյցներ դիւրին չըլլար գտնել^(*) :

Նորերուն մէջ, զոր պէտք չէ չփոթել
«նորերու բաժին»ին հետ, աղուոր քեր-
թուածներու կը հանդիպինք, ինչպէս Մառի
Յովհաննէսեանինները, Վ. — ինները, Մ.
Ա. Պարսամեանինները, Մ. Ուղուրլեանին-
ները, և ուրիշներ որոնց անունը գրչիս
ծայրը չիգար այս վայրկեանիս, — թրթ-
ռում, բաքախում, զղացում ու սէր, — և
պատահականներ ալ, որոնք տարին մէյ մը
հաղիւ կ'երեւան X. կամ Z. սկզբնատուե-
րով : Ասոնց մէջ ճշմարիտ բանաստեղծի խը-
մորներ կան : Պէտք է որ երիտասարդու-
թիւնը իր սէրը երգէ, իր հոգեկան առաւ-
պանքները, իր հրճուանքներն ու հատնում-
ները : Ամէն մարդ որ սէր մը ունի սրտին
մէջ, սքօղուած, չարչարող սէր մը, տեսակ
մը թեթեւացում, սփոփանք կը գտնէ՝ իր
զգացումները արտայայտող, իր խոհները
պատկերացնող քերթուածի մը ընթերցումով :
Այդ երիտասարդները ու երիտասարդուհիները
թո՛ղ շարունակեն զրել, պատրաստելու հա-
մար ապագայ բանաստեղծներու հոյլ մը և
թարմութիւն, նուրբ ճաշակ, փափուկ զգա-
ցումներ սփռելու համար օրուան գրականու-
թեան վրայ, ոսկի փոշիի կամ վարդի թեր-
թերու պէս որոնց գոյնն ու բոյրը պիտի
կազդուէր զմեզ տիրացուններու տափակու-
թենէն որ կըսպառնայ ողողել գրական—
լրագրական կոչուած մթնոլորտինս :

«Նորերու բաժին»ին վրայ ուրիշ անգամ :

ՄԵՆԱՍԻՐ

(*) Ծ. խ. — Յարգելով «Մենասէր»ի դի-
տողութիւնը և ենթադրած պատճառն ալ
ճիշդ գտնելով կը յայտարարենք թէ Մասիսի
խմբագրութեան գրական ծառայութիւն մը
մատուցած պիտի ըլլան անոնք որ ունին
այդ հաւաքածոներէն և ղիւրութիւն ընծա-
յեն մեզ՝ անոնց մէջէն ընտրանօք քաղելու :

ՄԱՍԻՍԻ յաջորդ թիւով պիտի հրատա-
րակենք ընդարձակ ՆՈՐԱՎԷՊ մը Շ. ՇԱ-
ԻԱՐՇԷ, որուն անունը կը բաւէ՝ զրուած-
քին գրական գեղեցկութեան ու վիպական
չահեկանութեանը վրայ գաղափար մը տալու
համար կանխաւ :

Մեր գրասէր ընթերցողները ո՛չ նուազ
հաճոյք պիտի զգան կարդալով, ՄԱՍԻՍԻ
նոյն թիւին մէջ, ԼԻՔՕՆԹ ՏԸԼԻԼԻ գեղեց-
կագոյն մէկ քերթուածին գրաբար թարգ-
մանութիւնը զոր կատարած է ՏԻԳՐԱՆ ԵԼ-
ՔԷՆՃԵԱՆ :

ԹՄԱՐԱՐԱՆԱՆ ՆՈՐԵՐ

Ս. Լուսաւորչի տօնին առթիւ, Ս. Պատ-
րիարքը հրաւիրուած է պատարագել ու քա-
րոզել այս կիրակի առաւօտ Ղալաթիոյ եկե-
ղեցին որուն տօնախմբութիւնն է : Հապէշ
պատուիրակութիւնը, որ տակաւին մայրա-
քաղաքս կը գտնուի, փափագ յայտնած ըլ-
լալով Հայ. Եկեղեցւոյ հանդիսաւոր արա-
րողութեանց ներկայ գտնուիլ, հրաւիրուած
է կիրակի օրուան Պատրիարքական Պատա-
րագին :

Ս. Պատրիարքը չաքաթ իրիկուն Մեծ—
կղզի երթալով, երկու օր անցուց իր եղբօր՝
Տօքթ. Կ. Օրմանեան էֆ.ի բնակարանը, և
կիրակի այցելեց Վսեմ. Միքայէլ էֆ. Մա-
միկոնեանի, Պատրիկ էֆ. Կիւլպէնկեանի,
Տիգրան էֆ. Թօքթեանի և ուրիշ ծաօթ
ազգայիններու որոնք օգափոխութեան կը
գտնուին հոն : Ն. Սրբազնութիւնը երկու-
շարթի Հէյպէլի երթալով՝ այցելութիւն
տուաւ Յունաց նախորդ Պատրիարք Տ. Կոս-
տանդիանոսի, և իրիկունը Բերա վերադար-
ձաւ :

Մալաթիոյ նորընտր կաթողիկ. Տեղա-
պա՛ն Տ. Գէորգ Վրդ. Ասլանեան իր պաշ-
տօնատեղին ուղեւորեր է Ակնէն ուր բարեռք
պաշտօնավարութիւն մը ունեցաւ և լաւ յի-
շատակները կը թողու իր հոգեւոր հովու-
թենէն :

Ֆրանսայի Գեղարուեստական Հանդէսները դրուատալից տողեր կը նուիրեն Կովկասցի Օր. Արմենուհի Պապահանի որ Բարիզի այս տարուան Նկարահանդէսին մէջ ցուցադրած է երկու յաջող պատկերներ, երկուքն ալ կանացի դիքեր: Այս առթիւ կը հաղորդեն նաև թէ Օր. Պապահան վերջին օրերս Բարիզի հայ մատրան մէջ պսակուեր է երիտասարդ բժիշկ Տօքթ. Բարբանէլլի հետ:

Աւսրախանի առաջնորդ Տ. Արիստակէս եպիսկ. Սեդրակեանց Բարիզ կը գտնուի այս միջոցիս, անձնական տկարութիւնը դարմանելու համար:

Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը, իր ատենապետին՝ Վսեմ. Պատրիկ էֆ. Կիււպէնկեանի վերադարձէն ի վեր նոր եռանդով մը կը զբաղի այդ Հաստատութեան վիճակին բարւոքման վերաբերեալ կարեւոր կարգադրութիւններով: Շարժուս մէջ, մասնաւորապէս, իր ուշադրութեան առարկայ դարձուցած է Հիւանդանոցի բժշկական մարմինն և ներքին պաշտօնէութեան մէջ տեղի ունենալիք կարգ մը փոփոխութեանց պէտքը: Այս և յարակից ընթացիկ գործերու տնօրինութեան զատ, Հոգաբարձութիւնը անցեալ ուրբաթ ամբողջ օրը անցուց Հիւանդանոցին մէջ, Տիկնանց Խնամակալութեան և Որբանոց — Արհեստարանի Խնամակալութեան հետ խառն նիստ ընելով, Ս. Պատրիարքին նախագահութեամբ, և ուշադիր քննութեան մը բովէն անցունելով Հիւանդանոցին բոլոր մասերը, մատակարարութիւնը, որքանոցը և այլն: Այս խառն դումարման մէջ խորհրդակցութեան առարկայ եղան երրորդ թեւին շինութեան և ուրիշ խնդիրներ: Տեղւոյ վրայ կատարուած այս դումարումը, որ ամիսը մէկ անգամ տեղի պիտի ունենայ այսուհետև, իրական օգուտներ և բարեբար արդիւնքներ կրնայ տալ:

Կայս. Բժեկական վարժարանի քաղաքային ճիւղի այս տարուան 18 յիշանաւարտներէն երեքը Հայ են՝ Պենոն էֆ. Պէզազեան (Կ. Պոլսեցի), Արէշ էֆ. Կիււպէնկեան (Էնկիւրիցի) և Կարապետ էֆ. Տէմիրճեան (Տիարպէքիցի): Ասոնք յաջողապէս անցունելով

իրենց աւարտական քննութիւնները, ստացան Տօքթորութեան վկայականին, որուն առթիւ կը շնորհաւորենք զիրենք և մասնաւորապէս Տօքթ. Պենոն էֆ. Պէզազեանը որ իր thesiseին առթիւ իր ուսուցիչներուն գնահատմանը արժանացած է: Պենոն էֆ., որ լրագրութեան մէջ ալ ծանօթ է իր զանազան հրատարակութիւններովը, շնորհիւ Պէրպէրեան վարժարանին մէջ առած ուսմանը և իր աշխատասիրութեանը, կարող եղած է Բժշկական վարժարանի վեց տարուան ընթացքը գոհացուցիչ կերպով աւարտել չորսուկէս տարուան մէջ:

Կը խնդրուի մեղմէ ծանուցանել թէ Բագրատունի վարժարանաց կիրակնօրեայ առեւտրական դասարանի քննութիւնները պիտի կատարուին յառաջիկայ կիրակի, 13 յունիս, ժամ 2ին (Ը. Թ.) Առեւտր. վարժարանին մէջ, ի Բանկալթի:

ՏՕՔԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ երկու հրատարակութիւնները, ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ և ԿԷՍ — ԲԺՇԿԱԿԱՆ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ կը վաճառուին Ծական զրուշի: Դիմել Պալենց Գրատուն, Պոլիս, կամ հեղինակին Պարտիզակ: Աւելորդ է խօսիլ այս երկու գրքոյկներուն օգտակարութեանը վրայ որ ծանօթ է:

ՏՈՔԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ՌԱՐԻՉԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Կը դարմանէ տղայոց հիւանդութիւններ (ներքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, ակաջի և կոկորդի գործողութիւններ:

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և չաբաթ Բերա, Մեծ — փոքր Գրէտի Լիոնէի քով, թիւ 331:

Երկուշաբթի և հինգշաբթի Գատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12:

Արսումսէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԱՆ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱՅ Օրագրի

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ մէջ կը վաճառուին հետեւեւոյնոր հրատարակութիւնք. —

1. — Արձագանգ խաղաղութեան, հեղինակ. իշխան Միրզա Րիզա Խան Տանիշ (Պարսկ. դեսպան ի Կ. Պօլիս) Ոստիաւոր քերթուած մը ի իշխտալ Լահէյի խաղաղութեան հաւատարմութիւն, տասնըհինգ լեզուներու թարգմանուած փառաւոր գեղարուեստական հատոր մը հեղինակին կեղանգագրով միասին: Գին կէս Օսմ. սկի կամ 12 ֆրանք. — 2. Հերպերթ Արենսըրի «Կենցաղ կամ Դաստիարակութիւնը»: Տիեզերահաշակ իմաստասէրին այս բազմազուտ գործը թարգմանուած սահուն աշխարհաբարի, կ'աբժէ արամէն գրագարանի մէջ իր մասնաւոր տեղն ունենայ. Գին 10 դրուշ. 3. Գերման քրօֆէսէօն Ա. Ալպրէսթի գործերէն սեռային առողջաբանութեան վրայ խօսող «Մարդը եւ իր ցեղը» տնուն խիստ շահեկան գործին Բ. Տիպ. — Գին 5 դրուշ. 4. Ժողովրդական քարոզներ. «Կեանքը առանց հաւատքի», գրեց Նիքոլէս վրդ. Դանիէլեանց գին 5 դրուշ. 5. Շարականք Հայ. Ս. Եկեղեցւոյ, աշխարհաբարի վերածեց Ե. Տ. Անդրէասեան: — Գին Ա. հատորի 2 դրշ. Բ. հատոր 5 դրշ.



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սննենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ առողտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Gie.

Ձեռքի, ուսի ու ուսի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՄԱՍՆԱՆՎԱԿԱՆ
ՆՊԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|----------|---|--|
| ԲՆՐԱ | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿՍ.ԼԱԹԱ | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍՏԱՆԲՍԱՐ | | Չարշը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կասաբեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ



1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՐԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՐԵՆԱՒՈՎ ՈՒՂԵՒՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԱՌ. ԲՈՒԵԼՈՆ ՂԷՄ:

Ընկերութեան դրամադուլը, աւելցնալէս վճարուած

10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

դուլս եւ շնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա,

ՅԱՄՍՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԷՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄՀՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ թուակի հիւղեր

VICTORIA

DE

BERLIN

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԷՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններուն վճարումները չաթաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 շրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ից ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ից » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ից ար. Բայական հրովարտակով եւ ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա

եւ Քրէտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷԶԷՃԵԱՆ

Պոլիս Քաբընքօղլու խան

բիւ 45 եւ 45 Բ.

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՆԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.
Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)
ՊՍՏՈՒՍԿԱՆ ՆԱԽԱԴԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ն. Ա. Բ. ԻՔՍ ԼՈՒԻՏԵ ՊԱՎԻԵՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնի
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՍԵՅԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԴՈՒՄ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան ժ. 11½

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճէն մինչեւ 11½

Երեւանի օրերը ժամադրութեամբ

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆԻ Զինատանէն, Հնդկատանէն,
Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բամ, հոսաւեք եւ առողջաբար թէյերէն,
որոնք ամբողջ եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու,
ձէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Նգրպատ:



ՏՕՔԹ. ԱՆԹՕՆԻԱՏԻՍ

(Dr. Antoniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մօրթային ախտերու
Բերա, Սերգիս փողոց, Թ. 20

(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ Վիէնայի Համալսարանէն ուր ու-
սած է տասնութէկ տարի, միեւնոյն ատեն
իր օգնական—բժիշկ ծառայած ըլլալով
Բրօք. Նաւմանի, Քարօսիի եւ Տիֆֆէլի
գաղտնի հիւանդութեանց յատուկ քլինիք-
ներու մէջ:

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ
մօրթային ախտերէ առաւապողները կ'ընդունի
զօրս կը բժշկէ նորագոյն եւ կատարելա-
գործեալ մէթօտներու համաձայն: Իր մաս-
նագիտութենէն դուրս՝ օրեւէ հիւանդ չըն-
դունիր:

ՏՕՔԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշ-
կական վարժարանին, անդամ Բարիզի Բժշ-
կական համաժողովին:—Մասնագէտ՝ արանց
եւ կանանց ծննդական գործարաններու հի-
ւանդութեանց:—Պատույ վկայագիր ունի
Պէրլինի, Լոնտոնի, Բեշթայի եւ ուրիշ եր-
կիրներու Ակադեմիաներէն:—Հնարիչ բժշկա-
կան գործիքներու եւ հեղինակ իր մասնա-
գիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի Պոլսոյ կողմը, կա-
մուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան
մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ
Բերա, Թաքսիմ, Քրանսակոն հիւանդանոցին
դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ
իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՕՆ

ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլ 19/6 երկուշաբթի օրէն սկսած է հաշուարդարութիւնը եւ վաճառումն այժմ լուծեալ է ֆթիմօրուլօ եւ Բնկերութեան տան ապրանքներուն: Բնկերութեան վաճառատունը կը գտնուի Սթամպուլ, Սուլթան Համամ, Բազթիվան Խան: Ապրանքներէն մաս մը կը գտնուի նաեւ Ֆընադգէի փողոցը գտնուող մթերանոցը: Վաճառքներն են մետաքսեղէն, թուիչ, բլիչ, բրդեղէն, բամպակեղէն, որք կանխիկ գնուած են անգլիական եւ ֆրանսական գործարաններէ՝ արդի գիններուն բարձրացումէն առաջ եւ այնպիսի գիններով, զորն անկարելի է այսօր ձեռք բերել եւ պիտի ծախուին այժմ հրապարակի վրայ անմրցելի պայմաններով: Հասարակութիւնն եւ վաճառականք կը հրաւիրուին տեսնել այս վաճառքներն եւ գտնուիլ ներկայ անակնկալ առիթէն:

ՏՕՔԹ Է. ՉՈՒՔԼՕՍ

Մասնագէտ փորի հիւանդութեանց (ստամոքսի, աղեաց) ինչպէս նաեւ օփրոզիտեան օխտերու:

Տօքթ. Է. Չուքլօս օր 17 տարիէ ի վեր ի գործ կը դէէ իր արուեստը, վերջերս այցելած է Եւրօպայի գլխաւոր հիւանդանոցները ուր մօտէն հետեւած է իր մասնագիտութիւնը կազմող հիւանդութեանց դարմանումի նորագոյն մեթոտներուն: Կը դարմանէ թէ՛ չօփոխաններու եւ թէ՛ աղոց ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւնները: Քիմիական տարրալուծում (որաչափան եւ քանակական) եւ մանրադէտական քննութիւն ստամոքսային հիւթերու: Կը բուժէ երկարականութեամբ եւ մասսժով: Կը դարմանէ ջերմամիզութիւնը իրեն յատուկ դրութեամբ եւ դեղերով: Հիւանդներ կ'ընդունին մօէն օր ժամ 9էն 12 եւ 2էն 5 (Ը. Ե.), իր բնակարանին մէջ՝ Բերա, Տէրվիլ փողոց, Թէփէ—Պաշլի պարտէզին դէմ: Կիններուն համար սպասման առանձին սրահ: Ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւններէ առաւապող աղքատները կ'ընդունին չորեքշաբթի օրերը ժամ 9էն մինչեւ կէս օր:

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն ինչի քօհաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Բիւրքէնէրօ զրան կէց, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշկաւոր հօվանոցներու վաճառատուն, Պօլիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները թէ՛ թօհաֆիլէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յատուկ հօվանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն աղակներին, եւ դիւրամօտ չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ադամ Վարդեան մեծապէս գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները: Կ'արժէ որ Շուկայ ելլող մօէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

ՓԱՍՏԱԲԱՆ

Վկայեալ Բարիզի Իրաւագիտական վարժարանէն: Հաստատուած է Ղալաթիս, Մէհմէտ Ալի փաշա խան, թիւ 35:

Կըստանձնէ պաշտպանութիւնը մօէն տեսակ դատերու՝ օսմանեան եւ օտար մօէն կորդի դատարաններու առջեւ:

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վ. ԿԱՅԵԱԼ

ԻԹՅԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԵՒ

ՊԱՇԵՆԻ ԺԵՆԵՎ ԲԺՇԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Կը բուժէ ազոպի մօէն տեսակ ցաւեր եւ լինտերու հիւանդութիւններ, կատարեալ գործեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունին մօէն օր, Բերա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ Լիօնէի դիմացը Կլավանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցօրեկ աղքատաց ազոպ քաշելու ձրի է: